



Տեղական
ժողովրդավարության
Եվրոպական շարժաթ



Եվրոպայի խորհրդի Տեղական և
տարածքային
իշխանությունների կոնգրես



Ի՞նչ է Տեղական Ժողովրդավարության Եվրոպական շաբաթը

Տեղական ժողովրդավարության եվրոպական շաբաթը (ELDW) համաեվրոպական նախաձեռնություն է, որի նպատակն է միավորել տեղական իշխանություններին և քաղաքացիներին՝ նպաստելու երկխոսությանը և խթանելու տեղական ժողովրդավարությունն ու քաղաքացիների ներգրավվածությունը:

Եվրոպայի խորհրդի 46 անդամ-պետության տեղական և տարածքային կառավարման մարմինները հրավիրվում են կազմակերպել հանրային միջոցառումներ՝ նպատակ ունենալով.

- ▶ **մեծացնել** քաղաքացիների մասնակցությունը տեղական մակարդակում որոշումների կայացման գործում
- ▶ **ծավալել** երկխոսություն քաղաքացիների և ընտրված ներկայացուցիչների (համայնքապետեր, ավագանու անդամներ) միջև
- ▶ **ներդնել** մասնակցային մեխանիզմներ ժողովրդավարական համակարգերում:

Մասնակիցները կարող են տեղական ժողովրդավարության եվրոպական շաբաթի անցկացման իրենց ժամանակացույցը սահմանել և միջոցառումներ կազմակերպել իրենց հարմար ժամկետներում:

Ի պատիվ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի, որի ստորագրման գործընթացը մեկնարկեց 1985թ. **հոկտեմբերի 15-ին**, գլխավոր միջոցառումը կարող է տեղի ունենալ այդ օրը կամ մոտ օրերին:

<<ELDW գործընկեր>> անվան շնորհումը նշանակում է տեղական մակարդակում ժողովրդավարության ամրապնդման գործում տեղական իշխանությունների և ասոցիացիաների հատուկ դերի ճանաչում: Ես Կոնգրեսը պատասխանատու է ELDW-ի համակարգման համար:



Ինչպե՞ս մասնակցել
«Տեղական
ժողովրդավարության
Եվրոպական
շաբաթին»

3 ՔԱՅԼ ELDW-ԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- 1 Լրացրեք գրանցման առցանց ձևը՝ www.coe.int/demoweek-registration և ստեղծեք ձեր սեփական ELDW օգտահաշիվը
- 2 Կազմեք և անցկացրեք տարվա հիմնական թեմայի և ձեր համայնքի արդի խնդիրների հետ առնչվող միջոցառումներ՝ ELDW-ի խորագրի ներքո
- 3 Տեսանելի դարձրեք ձեր գործողությունները ELDW կայքում՝ տեղադրելով դրանց մանրամասն նկարագրությունը ձեր կայք-էջում

Գրանցման վերաբերյալ մանրամասները կարող եք գտնել ELDW կայքում՝

www.coe.int/demoweek

ELDW-ի ինտերնետային կայքում Ներառված է հետևյալը.

- ▶ Նախորդ տարիների միջոցառումների մասին ընդհանուր տեղեկություն, գաղափարներ, տեղեկագրեր, ինչպես նաև գործիքակազմ
- ▶ Մի քանի լեզուներով լուրեր, պաստառներ և թռուցիկներ, որոնք հնարավոր է ներբեռնել
- ▶ Կոնգրեսի ELDW -ի թիմի համար ազգային համակարգողների, գործընկեր կազմակերպությունների մասին տվյալներ և կոնտակտներ
- ▶ մասնակիցների միջև ուղղակի փոխգործակցության և փորձի փոխանակման համար առցանց հարթակ, որը կնպաստի անկախ ցանցի ստեղծմանը:

Ի՞նչ նշանակություն ունի «Տեղական ժողովրդավարության եվրոպական շաբաթը» ձեր համայնքի համար



- ▶ **Խթանում է** մասնակցային մշակույթ՝ քաղաքացիներին ներգրավելով համայնքի կյանքում և տեղական հարցերին վերաբերող քաղաքականության մեջ
- ▶ **Նպաստում է** տեղական գործերում քաղաքացիների մասնակցության որակի բարելավմանը և ինտենսիվությանը, տեղական ինքնակառավարման նրանց ընկալմանը և եվրոպական կազմակերպությունների վերաբերյալ գիտելիքների ընդլայնմանը
- ▶ **Նպաստում է** քաղաքացիների և ընտրված ներկայացուցիչների ու համայնքի տարբեր խմբերի միջև երկխոսությանը
- ▶ **Մեծացնում է** քաղաքացիների վստահությունը ընտրված ներկայացուցիչների և ինստիտուտների նկատմամբ՝ որոշումների կայացման ավելի բաց և թափանցիկ գործընթացում նրանց մասնակցության միջոցով
- ▶ **Ամրապնդում է** համայնքի ընտրված ներկայացուցիչների և քաղաքացիներին միջև ընդհանուր առաքելության և փոխադարձ պատասխանատվության զգացումը
- ▶ **Համայնքի** գործունեությանը տալիս է եվրոպական ուղղություն

Տե՛ս ավելին.



democracy.week@coe.int



www.coe.int/demoweek



Premis061821 - ARM

www.coe.int/congress

Եվրոպայի խորհուրդը մայրցամաքի մարդու իրավունքների պաշտպանության հարցերով առաջատար կազմակերպություն է: Այն ունի 46 անդամ-պետություն, ներառյալ Եվրոպական միության բոլոր անդամ-պետությունները: Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը Եվրոպայի խորհրդի մարմին է, որը պատասխանատու է կազմակերպության անդամ-պետություններում տեղական և տարածքային ժողովրդավարության ամրապնդմանը նպաստելու համար: Կազմված լինելով երկու պալատից՝ Տեղական իշխանությունների պալատ և Տարածքային իշխանությունների պալատ և երեք հանձնաժողովից՝ այն համախմբում է 612 ընտրված պաշտոնյա, որոնք ներկայացնում են ավելի քան 130 000 տեղական և տարածքային իշխանություններ: